ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի «2024 թվականի սուբվենցիոն ծրագրերին մասնակցելուն համաձայնություն տալու մասին» թիվ 114-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետից հանել «Շենավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի փոխարինում» բառերը:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի «2024 թվականի սուբվենցիոն ծրագրերին մասնակցելուն համաձայնություն տալու մասին» թիվ 114-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում գրված «փուլ» բառից հետո լրացնել «Մեծ Պարնի բնակավայրի մշակույթի տան արտաքին հարդարման աշխատանքներ (2-րդ փուլ բարեկարգում)» բառերը:

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 16-ի «2024 թվականի սուբվենցիոն ծրագրերին մասնակցելուն համաձայնություն տալու մասին» թիվ 114-Ա որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետից հանել «Մեծ Պարնի բնակավայրի բժշկական կենտրոն տանող ճանապարհի ասֆալտապատում» բառերը: